կանգուն են, երկրաչարժերը նրանց վրայ չեն ներգործել եւ դժուար է դրանց քանդելը։ Փորձառու աչքերը կարող են իսկոյն նկատել, թէ ո՛ր աշկատարեան ամրոցները աւելի հին են եւ ո՛րը աւելի ասիճանական զարգացումն ունին։ Այս քարերը կոփելու, կոկելու, տաշելու համար անհրաժեշտ էին երկաթի գործիքները։ Ինչպէս Տեկորի (Շիրակ) աշկատարեան ամրոցի քարերի երկաթի կապերը նոյնպէս Ծէղիձորի եւ Պարտոնցի մէջ գտնուած պարտէզների միջի բերդի ամրոցի աշկատարեան շինուածքների ժայռերը երկաթի սեպերով են միացած։ Հետեւաբար Կամսարականների Տեկոր ամրոցի եւ Թորդումի Ծէղիձորի բերդի աշկատարեան կատարելագործուած ամրոցները ցոյց են տալիս որ երկաթը գտնուած էր այդ կերտուածքների շրջանում, աշկատարեան գարգացած շինութիւնների ժամանակ։ Անկոփ եւ կոփուած քարերով շինուած աշկատարեան ամրոցների մէջ եղած ժամանակամիջոցը առնուազն 5—10 դարէ։ Ցունական աշկատարեան շինութիւնները կոփուած տարեշրջանին են պատկանում եւ Ճորոխի Աւազանի նախնական աշկատարեան շինութիւնները, եթէ ո՛չ աւելի, 5—10 դար վաղաժամեայ աշկատարեաններից։

Բլրլկած որմերը, դարի վար հոսած սրբատաշ քարերը, բղկտուած պարիսպները բնիկների նման հոդեվարքի շրջանումն են